2. IX. 1932 թ.

Ընկ. Մ. Աբեղյանին

Ձեր կողմից մեզ ուղարկած «Հայ ժողովրդական վեպի» կազմելու, խմբագրելու և այլնի մասին պայմանագրի բոլոր կետերը մենք համարում ենք ընդունելի հետևյալ ճշտումով.

1. Աշխատությանը կցված կլինի մի առաջաբան *Պետահրատի* կողմից:
2. Ինչպես տպագիր, այնպես էլ անտիպ օգտագործվող վարիանտների հեղինակների հետ պայմանագրեր կնքելու, վճարումներ կատարելու և հոնորարային նորմաներ նշանակելու ամբողջ գործը վերապահվում է Պետհրատին ու հեղինակների հանդեպ միմիայն Պետհրատն է պատասխանատու հոնորարների համար:
3. Անտիպ վարիանտների հեղինակների հետ բանակցություններ վարելու և ձեռագրերը ստանալու համար Ձեզ ժամկետ է նշանակվում մեկ ամիս: Ձեռագրերի հեղինակների հետ բանակցում եք դուք, ստանում եք նյութերը և Ձեր կողմից դրանք քննելուց հետո ուղարկում եք մեզ համապատասխան գրություն, որի հիման վրա մենք կնքում ենք պայմանագիր ձեռագիր վարիանտի տիրոջ հետ ու բնագիրը հանձնում ենք Ձեզ օգտագործելու համար:

Եթե վերոհիշյալ ճշտումները Ձեր կողմից առարկություն չեն վերցնում, խնդրում ենք անցնել Պետհրատ՝ պայմանագի ր ը վերջնականապես ձևակերպելու և ստորագրելու համար:

Գեղբաժվար՝ (Ե. Չարենց)

Գործավար՝ (Շեհրիկյան)

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻՆ

Ընկ. Աբեղյան

Եթե համաձայն եք պայմանագրի այս վերջնական ձևակերպման հետ՝ ստորագրեցեք և մի օրինակը վերադարձրեք մեզ, որից հետո արդեն կանցնենք վարիանտների գնման աշխատանքին:

Չարենց

1932, սեպտեմբեր

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻՆ

Ընկ. Աբեղյանին

Ի պատասխան Ձեր ս. թ. դեկտեմբերի 1-ի գրության Հայտնում ենք, որ

1. Համաձայն Ձեր պահանջի հոնորար կտրվի յուրաքանչյուր ամսի 10-ին:
2. Արամ Ղանալանյանի հետ մենք կկնքենք համապատասխան պայմանագիր:
3. «Խ. Հ.» և «Գրական թերթում» կտանք աշխատանքին վերաբերող մանրամասն հայտարարություն:

Գեղ. բաժ. վարիչ՝ Չարենց

Քարտուղար՝ Շեհրիկյան

ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻՆ

11. մայիս, 1933 թ.

«Սասնա ծռեր» ժողովրդական վեպի պատ. խմբագիր

Ընկ. Մ. ԱԲԵՂՅԱՆԻՆ

Խնդրում ենք բանակցել բանահավաք Չիթունու հետ, իր մոտ գտնվող վարիանտներն ստանալու համար: Հոնորարը դրամով վճարելու հնարավորություն չունենալով՝ մենք կարող ենք նրան ուղարկել Պետհրատի կողմից հրատարակված գրքերից, իր ուղարկած ցուցակի համաձայն:

Գեղ. բաժ. վարիչ՝ Չարենց

Քարտուղար՝ Շեհրիկյան